

# ԵԹԵ ՐԻ ԸՆԿԵՐ ԱՒՆԵ՛



Հեղինակ՝  
ԵՐՍԵՍ ՌՈՆՔԻ

Թարգմանեց՝  
ՍՎՃՏՈՑ ՎԱՐԵ ԴԱԶԱՐԵԱՆ

# ԵԹԷ ԻՒ ԸՆԿԵՐ ՈՒՆԵ||

«Եթէ ձեզնից մէկը մի ընկեր ունի, եւ գիշերուայ ուշ ժամին գնայ նրա մօտ ու ասի. ”Ընկեր, ինձ երեք հատ հաց փոխ տուր, որովհետեւ մի ճանապարհորդ ընկեր է իջեւանել իմ տանը, եւ ես նրա առաջ գնելու ոչինչ չունեմ”։ Իսկ նա ներսից պատասխանի ու ասի. ”Մի՛ անհանգստացրու ինձ, քանի որ դոները փակուած են, եւ երեխաներս ինձ հետ անկողնում են, չեմ կարող վեր կենալ եւ քեզ հաց տալ”։ Վստահ եղէք, որ եթէ նոյնիսկ յանուն ընկերութեան վեր չկենայ ու չտայ նրան, նրա թախանձանքին տեղի տալով՝ վեր կը կենայ ու կը տայ նրան այն՝ ինչ հարկաւոր է»<sup>1</sup>։

Այս առակը դրուած է մի իւրայատուկ պայմանի ներքոյ. «Եթէ ձեզնից մէկը մի ընկեր ունի»։

Աղօթքի մասին մի առակ, ընկերութեան եւ հացի կնիքի ներքոյ դրուած։ Կարող էինք նրան իբրեւ տիտղոս տալ. «Ընկերութեան հացը»։ «Եթէ ձեզնից մէկը մի ընկեր ունի եւ նրան ասի. ”Ընկեր, ինձ երեք հատ հաց տուր, որովհետեւ հիւր ընկեր ունեմ”»։

Ընկերութեան շրջանառութիւն կայ առակի ներսում եւ այս մէկ ու միակ անունով է՝ որ ճանաչուած են գործող անձերը. ընկերներ լինելը նրանց ինքնութիւնն է, եւ միաժամանակ՝ նրանց կրօնը, ըստ այս եզրի առաջնային ստուգաբանութեան. կցել, իրալ կապել, միութիւն ստեղծել։

Խօսակցական լեզուում էլ ենք գործածում այս արտայայտութիւնը. «Ինձ շատ կապուած եմ զգում այս անձին»։ Այս կապը մեզ որոշակի բաներ է հասկացնում կրօնից: «Կրօնական» լինելու համար՝ հարկաւոր է ընդունակ լինել կապեր ստեղծելու, ընդունակ լինել մտերմութեան փնտողներ եւ կերտողներ լինելու, մարդկանց առաջ եւ Աստծոյ առաջ։

Ընկեր՝ Աստծոյ անուններից մէկն է։

Սա նախեւառաջ ասում է մեզ առակը, որ Աստծոյ մասին խօսում է ինչպէս ընկերոջ մասին, որ պատմում է աղօթքը որպէս ընկերութեան պատմութիւն, որ աստուածաբանութիւն է կերտում՝ խօսելով մարդաբանութեան մասին։

«Եթէ ձեզնից մէկը մի ընկեր ունի». աղօթքը նախեւառաջ մի ընկեր ունենալն է, այսինքն՝ Աստծոյ հետ ունենալ սիրոյ խօսքերով հոլովուած յարաբերութիւն։ Աղօթելը նման է բարեկամութեանը, բարիք կամենալուն։

Աղօթքը սկսելուց առաջ պէտք է որ յստակուի Աստծոյ վերաբերեալ ունեցած մեր պատկերացումը. առաջնակարգ անյապաղ իրականութիւնը, իրական աւետարանական ոգիով աղօթելու առաջին պայմանը Աստծոյ մեր անձնական սրբապատկերը գծելն է։

Աստուած հարիւր անուն ունի։ Դրանցից իննսունինը ճանաչում ենք, գրուած են սրբազան գրքերում, բայց Աստծոյ հարիւրերորդ անունը սրտի գաղտնիքի անունն է, այն անունը՝ որով միմիայն ես եմ նրան դիմում։ Աստծոյ իմ բերանում թողած համն է։ Աստծոյ հարիւրերորդ անունը այն անունն է՝ որ նրան տալիս է իմ սէրը։

Ընկերութիւնը խաչի կերպարանքն ունի, ստանձնուել է Քրիստոսի կողմից որպէս ուղղահայեաց եւ հորիզոնական խորհրդանշան, լուսարձակուած դէպի

<sup>1</sup> Հկո 11, 5-8

Աստուած եւ գէպի արարածները, գծագրելու համար սրտի խաչմերուկ, ընկերութեան գերագոյն աստիճանի մարդկային խաչը՝ որ փրկում է եւ տալիս բերկրանք:

Ինչպէ՞ս կարող եմ հասկանալ՝ թէ իմ եւ ուրիշ մէկի միջեւ ընկերութիւն կայ:

Ո՞րն է նշանը՝ որ Աստծոյ հետ իմ յարաբերութիւնը ընկերային է:

Ընկերութիւնն անկասկածելի է՝ երբ հասունանում է բերկրանքի պտուղը:

Ընկերութեան երաշխիքը բերկրանքն է:

Իսկ Աստուած ինձ հաղորդում է բերկրանք: Թէ՞ հաղորդում է ինձ լրջութիւն, ջանասիրութիւն, բացատրութիւններ, խորք, իմաստ: Բոլորն էլ անհրաժեշտ իրականութիւններ են, բոլորն էլ շա՛տ բարի: Բայց տալի՞ս է ինձ ուրախութիւն: Որքա՞ն են ուղղամիտ, բայց դժբախտ քրիստոնեաները, որովհետեւ տակաւին չեն բացայայտել ընկերութեան բերկրալի խաչը:

Աղօթքը հասկանում է նա՝ ով հասկանում է ընկերութիւնը, ով բերկրանքի պաշարներով հարուստ շտեմարան է. բերկրանք՝ որ հնարաւորութիւնն է քրիստոնեայի համար՝ ուրախութեամբ գործադրելու սիրոյ պատուիրանը:

Կայ աղօթքի մի ուսուցիչ եւ այդ ուսուցիչը ընկերութիւնն է. ընկերոջդ խնդրում ես քո կողքին լինել՝ երբ քո կեանքը տկար է եւ գանդաղ են պտտում գոյութեան անիւնները, երբ կարիքն ունես կեանքի յաւելման, երբ բոցը առկայծում է եւ ճրագի ձէթը թւում է վերջացած: Ընկերոջիցդ միայն բացառիկ գէպքերում ես առարկաներ խնդրում: Աւելի խնդրում ես ժամանակ, միասին երազել, ուրախութեան փոխանակում, գորովի սփոփանք:

Եւ բոլորս էլ ունեցել ենք փորձառութիւնը. ընկերոջ հանդիպելը մի իրականութիւն է՝ որ ընդունակ է ազատագրել մեր օրերը, նաեւ տխուրներն ու մթինները: Փրկագնել եւ վերստին ճանապարհ ընկնել:

Ընկերը քեզ աւելի մարդկային է դարձնում: Այսպէս նաեւ Աստուած, մարդկայնութեան լրացում՝ մեր անբաւարար կեանքերի համար:

«Եթէ ձեզնից մէկը մի ընկեր ունի, եւ գնայ նրա մօտ ու ասի ...»:

Երեք բայ գծում են առաջին քարտէզը, աղօթքի առաջին ճարտարապետութիւնը. ունենալ, գնալ, ասել:

Երեք բայ՝ որ մատնանշում են երեք ճշգրիտ շարժումներ. մի յարաբերութիւն, մի տեղափոխութիւն (որ սեփական անձից դուրս գալն է եւ գնալը գէպի ուրիշը), մի հաղորդակցութիւն:

Սիրտ, շարժում, խօսք:

Սկզբում դրուած է ընկերային մի ուրախալի կապ. Ես – Դու: Ապա խօսքը վերաբերում է գէպի «Դու»ն գնալուն, տեղափոխելով առանցքը, դուրս գալ «Ես»ից, որ նկատուած էր որպէս աշխարհի կենարոնը: Եւ վերջում, խօսք ուղղել, յարաբերութիւն ստեղծել, երկխօսութիւն հանգուցել, չմնալ կրաւորական ու ինքնահաճական վայելքի մէջ. «ընկեր ունեմ»:

Գնալ գէպի ընկերը, որովհետեւ եթէ գէպի մեր ընկերների տները տանող ճանապարհները քիչ են երթեւեկուած, կը լցուեն փշերով ու մառախուզով:

Խօսել ընկերոջ հետ, ինչպէս ուսուցանում է մեզ Գրիգոր նիւսացին. «Եթէ ասելիք ինչ որ մի բան ունես, գրիր ինձ: Իսկ եթէ ասելիք ոչինչ չունես, միեւնոյնն է՝ գրիր ինձ, նաեւ պարզապէս ասելու համար՝ որ ասելիք ոչինչ էլ չունես»:

Սկզբում աղօթքը չէ, սկզբում կեանքն է:

Ընկերութիւնը աղօթքի մեծ դպրոց է, թերեւս ամենաբարձրակարգը:

Դառնում է կրօնի պարոց, որովհետեւ ճշմարիտ կեանքի դպրոց է:

Աղօթելը նման է բարեկամութեանը, բարիք կամենալուն:

«Ընկեր, հաց տուր ինձ, որովհետեւ ընկերս իմ տուն է եկել»:

Առակի մէջ ընկերներն այժմ երեքն են եւ ընկերութեան այս շրջանառութիւնն է այս առակի յուղիչ տարրը: Գործող անձերը դուրս են գալիս երկու միմեանցից գոհ ընկերների երկողմ յարաբերութիւնից – գործնական՝ թերեւս – մտնելու համար յոգնակի յարաբերութեան մէջ: Ընկերը, որ քայլում է գիշերուայ մէջ եւ բախում, չի խնդրում իր համար, այլ իր ընկերոջ՝ որն իր հերթին քայլել է գիշերուայ մէջ: Եւ այս աշխարհը ծածկում է ճանապարհների մի ցանցով՝ որոնք առաջնորդում են մեզ տնից տուն, սրտից սիրտ: Գիշերուայ մէջ, ընկերութեան միակ կողմնացոյցով:

Սա այս առակի ուրախալի ու լուսաւոր կերպարանքն է. պատկերը մի աշխարհի՝ ուր աղօթքը կերտում է վստահութեան կառոյցներ, ուր կասկածի տեղն է բոնում ընդունելութիւնը, ուր մինչեւ իսկ գիշերը բնակեցուած է ո՛չ թէ վախերով, այլ ընկերների ձայներով: Մի աշխարհ ո՛չ թէ կորած քայլերի, ճանապարհների՝ որ մոլորւում են առանց հասցէի, այլ մի աշխարհ՝ ուր ստեղծուել է սրտի աշխարհագրութիւն, աշխարհը աւետարանական «հարիւրապատիկ»ի, հարիւր եղբայրների, հարիւր տների, հարիւր քայլերի: Իսկ ճանապարհի խորքում սպասում է քեզ մի ընկեր:

Մանաւանդ թէ, մեր ամենաիրական համայնքը կայանում է ընկերների սրտում:

Եւ ընկերոջից խնդրում է ընկերութեան հացը: Ո՛չ իր, այլ մի երրորդ ընկերոջ համար: Կարելի է աղօթել ուրիշ անձերի համար, կարող ենք եւ պարտաւոր ենք մեր աղօթքից ներս համախմբել մեր ամենակենսալի ու ամենաիրական յարաբերութիւնները: Աղօթում ենք հացի ու ընկերութեան համար: Հացի համար, որ խորհրդանշանն է այն ամէնի՝ որ պահում է մեզ կեանքի մէջ: Ընկերոջ համար, որովհետեւ միայն ընկերների հետ է՝ որ լաւ ենք պայրում:

Աղօթքը ընկերային ներկայութիւնները հաղորդակցութեան մէջ դնելն է: Եւ բխեցնելը աշխարհի վրայ ընկերութեան հացը: Աղօթել՝ նշանակում է շրջանառութեան մէջ գնել սէրը Քրիստոսի մարմնում, աշխարհի երակներում: Իսկ Աստուած ակունքն է, ստորգետնեայ հոսանքը եւ գետաբերանը այս սիրոյ:

Գոյութիւն չունեն երկու տարբեր սէրեր, մէկն Աստծոյ հանդէպ եւ միւսը մարդկանց միջեւ: Գոյութիւն ունի միայն մէկ միակ սէր, առանց շարունակականութեան լուծման, որ միացնում է ընկերը ընկերոջը, ընկերուհին՝ ընկերուհուն, այրը՝ կնոջը, Քրիստոս՝ իր եկեղեցուն, ինչպէս ասում է Պօղոս Առաքեալը: Եւ «այս խորհուրդը մեծ է»<sup>2</sup>, այս խորհուրդը մէկ եւ միակ է՝ կերպերի բազմազանութեան մէջ:

Առակում յիշուող աղօթողը չի ամաչում իր աղքատութեան համար, ընկերոջ առաջ ազատ է՝ ներկայացնելու համար իր կարիքը. սեղանին դնելու ոչինչ չունեմ: Աղօթողը հարուստ է միայն իր այս կրնակի ընկերութեամբ: Եւ հռչակում է այս ընկերութիւնն, ասելով. «Երեք հատ հաց տուր ինձ»: Զի խնդրում հաց, չի խնդրում մի կտոր հաց, այլ՝ երեք հատ հաց: Երեք հատ հացը բաւական է մի ամբողջ ընտանիքի համար, ուրեմն այդ տանը ընկերութիւնը մի փոքրիկ տօն է պատրաստել ամբողջ ընտանիքի համար: Հիւրը մենակ չի ուտելու իր հացը, այլ «կիսելու են հացը միասին, բերկրանքով ու պարզութեամբ»<sup>3</sup>. Հիւրը, հացի փոխարէն, պարգեւում է բերկրանք:

Երեք բայ, երեք ընկեր, երեք հատ հաց:

Այս եռակի բաժանման մէջ, մեզնից իւրաքանչիւրն այդ աղօթողն է, ամէն ինչից աղքատ, հարուստ միայն ընկերներով ու քաջութեամբ: Դուռը, որին

<sup>2</sup> Եփս 5, 32

<sup>3</sup> Հմմտ. Գործը 2, 46

բախում է, Աստծոյ դուռն է: Իսկ ճանապարհորդ ընկերը աշխարհի խորհրդապատկերն է, այլաբանական պատկերն այս ուխտագնացութեան՝ դէպի կեանքը: Սրանում գաղափարակից ենք ու աջակից:

Սէրը այս սրտակցութիւնն է, որ ուխտագնացութեան է մեկնում դէպի մարդկային արկածալի պատմութիւնը: Իսկ աղօթքը գնալն է բացելու Աստծոյ դոները, ստանալու համար նրանից ընկերութեան հացը եւ կիսելու այդ հացը ժամանակի ճանապարհներում երթեւեկող ուխտաւորների հետ, տօն կազմակերպելով անցկացուած իւրաքանչիւր գիշերուայ համար, բացուած իւրաքանչիւր դուան համար, որ լուսեղէն աչքի նման բացւում է գիշերուայ գրկում:

Արեւելեան եկեղեցու Հայրերը Ամենասուրբ երրորդութեան կեանքն անուանում էին «pericoresi», սիրոյ եւ ընկերութեան շրջանառութիւն, ճամփորդող ընկերութիւն:

Այս աստուածային սիրոյ շրջանառութիւնը մեր առակի ներսում քօղարկուած է ընկերային սիրոյ շրջանառութեան, հացի ու բերկրանքի փոխանակման մէջ: Հացը ապրելու համար, ընկերութիւնը՝ ապրելու պատճառ ունենալու համար:

Իսկ աղօթքը՝ կերտելու համար վստահութեան կառոյցներ, անտարբերութեան կամ կասկածի փոխարէն, գիշերուայ մէջ լոյսի ճեղքեր բացելու համար, խնդրելու-ստանալու-պարզեւելու համար այն՝ ինչ ապրեցնում է, ինչ կեանք է տալիս, եւ որի շտեմարաններն Աստծոյ տանն են:

Ինդրել, ստանալ, պարզեւել. սա այն եռակի շարժումն է՝ որ մեզ գնում է Աստծոյ եւ ուրիշների միջեւ: Եւ ինչպէս իւրաքանչիւր մարդ՝ առարկաներն իմ տիրապետութեան ներքոյ չեն, ես պարզապէս առարկաների անցքի տարածք եմ: Կեանքն իմ տիրապետութեան ներքոյ չէ, գալիս է ինձնից առաջ եւ գնում է ինձնից անդին: Ստանում եմ այն եւ փոխանցում: Իսկ երբ դադարում եմ փոխանցել կեանքը, դա՛ է ճշգրիտ պահը՝ երբ կեանքն ինձնում ցամաքում է:

Ապրել՝ նշանակում է ունեցածս ամէն ինչ դարձնել հաղորդութեան խորհուրդ:

Ես հարուստ եմ միայն այն բաներով՝ որ կարողացել եմ պարզեւել: Իմաստութիւնն է բոլոր ժամանակներում ապրած մեծ հոգեկիրների:

Մեր գերը կեանքի լաւ հաղորդիչներ լինելն է, հաղորդիչներ այն ամէն ինչի՝ որ ապրեցնում է, ինչպէս նիւթերի մասին ասւում է՝ թէ էլեկտրականութեան բարձր հաղորդականութիւն ունեն: Լաւ հաղորդիչներ հացի եւ ընկերութեան:

Առակը շարունակում է: Մեզ ուսուցանելուց յետոյ՝ որ ճամփորդող ընկերոջ առջեւ դուռը բացւում է որեւիցէ ժամի, եւ որ գիշերը երիտասարդ է՝ որքան երիտասարդ է զգացումը. ուսուցանելուց յետոյ՝ որ ընկերութիւնը վճարւում է փութաջանութեան ու քաջութեան հնչուն ոսկեդրամով (գիշերով դուրս գալ տնից, բախել, խնդրել եւ խնդրել կրկին). ուսուցանելուց յետոյ հաց տուող ընկերոջ առջեւ ապրուած ազատութիւնը, հաց խնդրող ընկերոջ ազատութիւնը՝ աղքատ հոչակուելու եւ այնուամենայնիւ կամենալու պատրաստել մեծ, տօնական սեղան. այս ամէնն ուսուցանելուց յետոյ, այժմ տալիս է մեզ վերջին պատգամը:

«Եթէ հացը նրան չտայ յանուն ընկերութեան, կը տայ նրա համարձակութեանն ի տես ...»:

Ընկերութիւն կերտողի քայլերը գիշերուայ մէջ, խօսքերը գիշերուայ մէջ, ապարդիւն չեն:

Առակում գործածուած գլխաւոր բայն է «տալ»:

Սա՛ է հաց տուող ընկերոջ պարտականութիւնը:

Աւետարանի մտածողութեան մէջ, «սիրել» բայը թարգմանւում է «տալ» բայով:

Աստուած պարգեւում է. «Եթէ դուք՝ որ չար էք, գիտէք տալ … , քանի՛ց առաւել Աստուած՝ որ բարի է, կը տայ … »<sup>4</sup>:

Աստուած տալիս է. մեր ամէնօրեայ հացը տալիս է մեզ, այսօր:

Աստուած տալիս է. երկու ձկներն ու հինգ նկանակները բազմացնելով հինգ հազար հոգու համար:

Աստուած տալիս է. լեռներ ձեղքելու, ծովի մէջ ծառեր տնկելու կարողութիւնը:

Աստուած տալիս է. թռիչք ճնճղուկների թեւերին, իսկ «դուք շա՛տ ճնճղուկներից աւելին արժէք»<sup>5</sup>: Աղօթել՝ նշանակում է գիտակցել՝ որ մեր բոյնը Աստծոյ ձեռքերի մէջ է:

«Եթէ հացը նրան չտայ յանուն ընկերութեան, կը տայ նրա համարձակութեանն ի տես», նրանում վախի, երկիւղի, ամօթի բացակայութեան համար:

Կը տայ նրան հացը, որովհետեւ իր ընկերը ազատուել է վախից, որովհետեւ ազատ մարդ է, որովհետեւ «սէրը փարատում է երկիւղը»<sup>6</sup>:

Կը տայ նրան, այս հացը, ո՛չ որովհետեւ ձանձրացած է, այլ որովհետեւ խորքում հիանում է իր ընկերոջով. եւ հպարտ է ընկերը լինելու համար մի մարդու՝ որ ընդունակ է այն փոքրիկ քաղցր ու հաճելի խենթութիւնների, որ ներշնչում է սէրը:

Սէր, աստուածային խենթութիւն, – ասում էր Պղատոնը:

Այսպէս մենք Աստծոյ առաջ չպէտք է վախենանք տաղտկալի կամ աներես երեւալուց, այլ պէտք է աղօթքին խառնենք մի պտղունց խենթութիւն, չափազանցութիւն, անչափաւորութիւն, ազատութեան հետ միասին: Կարեւոր չէ խնդրանքի առարկան, այլ՝ թէ խնդրում ես հաւատքով:

Բանականութեան եւ աւանդութեան համաձայն ծրագրաւորման մէջ, կանոնների ու արարողակարգի օրէնքների մէջ՝ մի քիչ այն անբանականութիւնից, որ բնորոշ է սրտին:

Աղօթողը գիմում է հաց տուող ընկերոջը, որովհետեւ վստահութիւն ունի: Ճամփորդող ընկերը հասնում է ուշ գիշերով, որովհետեւ վստահ է՝ որ կ'ընդունուի:

Հաց տուող ընկերը փոխ է տալիս, որովհետեւ իր հերթին վստահ է՝ որ ետ կը ստանայ տուածը:

Աղօթքի չնչած օդը վստահութիւնն է:

Որն, ի միջի այլոց, հաւատքի միւս անունն է:

«Երբ մի բան էք խնդրում, հաւատքն ունեցէք՝ թէ կը տրուի ձեզ, եւ այն ձեզ կը տրուի»<sup>7</sup>:

Աղօթքը ծնւում է վստահութիւնից եւ իր հերթին կերտում է վստահութիւն: Եւ տարածում է աշխարհում մի նոր չնչառութիւն, ուր կասկածն իր տեղը զիջում է վստահութեանն ու սրտակից մտերմութեանը, վրէժխնդրութիւնը զինաթափում է ներման զօրութեամբ, եւ թերեւս կը հասնի մի օր՝ երբ բոլորս կը լինենք ազատ եւ խոցելի, առանց այլեւս վախենալու՝ թէ կը յարձակուեն մեր վրայ կամ կը գործածեն մեր տկար կողմերը: Աղօթքը պատմութիւն է կերտում:

<sup>4</sup> Մկր 7, 11

<sup>5</sup> Մկր 10, 31

<sup>6</sup> 1Յկհ 4, 18

<sup>7</sup> Մկր 21, 22

«Եթէ ձեզնից մէկը մի ընկեր ունի»: Հիանալի մեկնակէտ մարդկային արկածալի պատմութեան, կեանքի եւ գիշերուայ արկածախնդրութեան, որ աղօթքն է:

Երգ հացի, երգ ընկերութեան. աղօթքը սա է:

Հացը եւ ընկերները հարկաւոր եւ բաւարար են լաւ ապրելու համար:

Հաց տուող ընկերը, ճանապարհ ընկած ընկերը: Իսկ ես մէջտեղում, որպէս աղքատ ու աղօթական ընկեր, երկու սիրոյ գերի. քայլում եմ գիշերուայ մէջ, ձեռքերս հացով լի, եւ լոյսի մի դուռ իմ տունն է, ուր սպասում է ինձ մի ընկեր եւ իր ցանցը յոգնութեան ու ժպիտների:

Այս առակից հեռու, բայց այնուամենայնիւ՝ այս առակի հետ ներդաշնակ, Մատթէոսի խօսքը. «Եթէ ձեզնից երկու հոգի երկրի վրայ միանում են ինչ որ մի բան խնդրելու համար, նրանց կը տրուի Հօր կողմից՝ որ երկնքում է»<sup>8</sup>: Սա՛ է յաղթական միութիւնը, որ ապրուած է այս առակում: Միութիւն՝ հացի կարիքի մէջ, երկրային պանդխուութեան գիշերը միասին կտրել անցնելու փափաքի մէջ, ընկերութեան արարողակարգով: Աղօթքի ակունքը միանալու կիրքն է, մի՛շտ, որ շօշափելի կերպով արտայայտում է կարիքներով կամ փափաքներով:

Կարիքներ կամ փափաքներ, երգեր կամ արցունքներ, հաց եւ ընկերութիւն, գիշեր եւ ճանապարհներ. ներշնչումը, որ հոսում է աղօթքի խօսքերի մէջ, պատմութեան գեղեցիկ եւ դժուար ուխտագնացութեան մէջ հաղորդութիւնն է:

Ընկերութիւնը՝ հաղորդութեան բարձր կերպը, ծածուկ տաղն է՝ որ հոսում է խօսքերի ու աղօթքների կերպարանքի ներքոյ:

Գեղեցիկ՝ ինչպէս ընկերութիւնը, դժուար՝ ինչպէս քաղցը եւ գիշերը, մեր ուխտագնացութիւնն ուղղուած է ընդհանրականից դէպի Ընդհանրականը, տիեզերականից՝ դէպի Տիեզերականը, ճանապարհներից՝ դէպի Աստծոյ տունը, հիւսելով վստահութեան խիտ ցանց, կերտելով մարդկային յարաբերութիւնների մի նոր ճարտարապետութիւն. եւ սա Արքայութիւնն է:

Ոեբեկայի պատմութեան մէջ ջուրն էր, ընկերոջ պատմութեան մէջ՝ հացը. երկուսն էլ մատնանշում են միեւնոյն ծարաւն ու քաղցը:

Բոլորս էլ այդ ծարաւի որդիներն ենք, որ կրկնում է առանց յոգնելու. «Լաւ չէ՝ որ մարդ միայնակ լինի»<sup>9</sup>:

Աղօթքը ծարաւն ու ընկերութիւնը արտայայտելն է.

ծարաւը՝ որ փափաքն է ինչ որ մէկի

— տղամարդ, կամ կին, կամ Աստուած —

որ մեղմի կեանքի պապակը.

Փափաքն ինչ որ մէկի՝ որ հրամցնի ընկերութեան հացը:

Է՛լ աւելին: Փափաքը մի տան, ուր Արամի ջրհորը դառնայ հացի աղբիւր:

Երբայեցերէն, «Հացի տուն» է նշանակում «Բեթղեհէմ» անունը, քաղաքը՝ ուր ծնուեց Յիսուս: Անունն է էմանուէլի՝ Աստծոյ որ մեղ հետ է: Աստծոյ տունն է մեր վերջին հայրենիքը:

Զրի, ընկերութեան, հացի հանգը ըստաւաններով՝ աղօթքի արահետը հասնում է իր նպատակակէտին. Աստուած մեղ հետ:

Եւ եթէ Աստծոյ մասին կարդալով որպէս քեզ ընկեր,

գէթ մէկ պահ զգացիր քեզ բարեկամ այս Աստծուն,

դու աղօթեցիր:

Ուրեմն այս տողերը հասան իրենց նպատակին:

<sup>8</sup> Մկր 18, 19

<sup>9</sup> Ծնդ 2, 18

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան արդի միջոցները, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի բարի լուրը տարածում ենք նաեւ համացանցի ճանապարհով, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումները եւ առաքումի ժամանակները։ Մեր փափաքն է հաղորդել Քեզ այն՝ ինչ մեզ հաղորդուեց նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով։ Կարող ես Քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով Քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն։

*mashtoz@davide.it կամ mashtoz@email.it*

Այս հասցէներից որեւէ մէկին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն մեր անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր գրութիւններ պարունակող այս նամակները։

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու համար, ինչպէս նաեւ որեւէ տեղեկութիւն խնդրելու եւ հարցումներ ներկայացնելու նպատակով, կարող ես գործածել վերոնշեալ հասցէները, կամ գրել հետեւեալ հասցէին։

**Mashtoz Vahe Lazaryan  
Isola di San Lazzaro degli Armeni  
30126 Venezia - Lido (Italia)**

Կանխայայտ չնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝

*Վաշինգտոն Աշտ Ռազմարեան*